ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ք. Երևան, 7 հուլիսի 2026 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) հերթական նիստի

Մասնակցում էին՝

Գ. Պապոյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)

Տ. Սարգսյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ժ. Խառատյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Կ. Չիլինգարյան – <<Սպառողների խորհրդատվության կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ (Խորհրդի անդամ)

Ա. Պետրոսյան - <<ՓՄՁ համագործակցության ասոցիացիա>> հասարակական կազմակերպության կառավարման խորհրդի անդամ (Խորհրդի անդամ)

Վ. Բագիյան – ՀՀ ԳԱԱ <Հայկենսատեխնոլոգիա> ԳԱԿ-ի <Մանրէների ավանդադրման կենտրոն> հիմնարկի ղեկավար,կ.գ.թ.,դոցենտ (Խորհրդի անդամ)

Բացակայում էին՝

Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)

Օ. Աբրահամյան – ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Հ. Զաքոյան – Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր(Խորհրդի անդամ)

Հրավիրված էին՝

Տ. Պետրոսյան - ՍԱՏՄ ղեկավար

Գ. Մկրտչյան - ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ

Մ. Գրիգորյան – ՍԱՏՄ որակի ապահովման վարչության պետ

Կ. Սողոմոնյան - ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ

Ա. Ստեփանյան - ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետի պարտականությունները կատարող

Ողջունելով ներկաներին՝ Խորհրդի նախագահ Գ. Պապոյանը առաջարկեց հաստատել օրակարգը, որում ընդգրկված էր 6 հարց:

Օրակարգը հաստատվեց միաձայն, որից հետո Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Գ. Պապոյանը՝

Օրակարգի 1-ին հարցը ԱՏԳ ԱԱ 24 ծածկագրին դասվող ծխախոտահումքի, պատրաստի արտադրանքի և ծխախոտի փոխարինիչների «Ոչնչացում» մաքսային ընթացակարգի համար եզրակացության տրամադրման վերաբերյալ՝ առաջարկեց ավելի մանրամասն քննարկում և հարցի քննարկումը հետաձգել:

Օրակարգի 2-րդ՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի բնականոն գործունեությունը չխաթարելու, հիմնական միջոցների գույքագրումը և հաշվապահական հաշվառումը պատշաճ կերպով վարելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել արտապատվիրակված մասնագիտական կազմակերպության միջոցով գույքագրման ծառայություններ՝ ներկայացրեց Տ. Պետրոսյանը: Տ. Պետրոսյանը նշեց , որ 2025 թվականին՝ 2026 թվականի բյուջետային հայտի կազմման փուլում անկանխատեսելի էր վերոնշյալ ծառայությունների ձեռքբերման պահանջը, ուստի Տեսչական մարմնի 2026 թվականի հաստատված բյուջեով գույքագրման ծառայությունների ձեռքբերման համար գումար չի նախատեսվել:

Հարկ է նշել նաև, որ առկա են մարզային ստորաբաժանումներ, որոնց գույքագրման ծառայության ծավալի մեծությունից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախորդ տարիներին գույքի հաշվառումը և գույքագրումն իրականացվել է էական թերացումներով՝ հնարավոր չէ «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման անցկացման կարգը և ժամկետները սահմանելու մասին» Ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի թիվ 2-Ն հրամանի պահանջներին համապատասխան գույքագրումն հստակ և ամբողջական իրականացնել Տեսչական մարմնի անձնակազմի միջոցով և պահանջվում է մասնագիտական աջակցություն:

Գ.Պապոյանի հարցին թե ինչքան գումար է անհաժեշտ , Տ.Պետրոսյանը ասաց 4,500.0 հազ. դրամ,իսկ Գ.Մկրտչյանը հավելեց, որ մրցույթի իրականցման արդյունքում պայմանագիրը արդեն կնքվել է: Գ.Պապոյանի այն հարցին թե որ տողերից են նվազեցվելու, Գ.Մկրտչյանը նշեց՝ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով 1213 «Տեսչական վերահսկողության ծրագիր» ծրագրի 11017 «Սահմանային պետական վերահսկողության շրջանակներում ներմուծվող սննդամթերքի պահեստային նմուշը այլ պետության ռեֆերենս փորձարկման լաբորատորիա ուղարկելու ծառայություններ» միջոցառմամբ նախատեսված 10,000.0 հազ. դրամ գումարը նվազեցնել 4,500.0 հազ. դրամով՝ պայմանավորված նախորդ տարվա արդյունքային ցուցանիշների կատարողականով, որի համար հիմք է հանդիսացել ապրանքը տնօրինողների կողմից սահմանային պետական վերահսկողության շրջանակներում ներմուծվող սննդամթերքի պահեստային նմուշը այլ պետության ռեֆերենս փորձարկման լաբորատորիա ուղարկելու ծառայությունների անհրաժեշտությունը (ՀՀ «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքի 16-րդ հոդված): Իսկ Գ.Պապոյանի հարցին՝ արդյոք դրա հետևանքով աշխատանքի որակը չի տուժի, Տ. Պետրոսյանը նշեց,որ տարիների փորձը ցույց է տվել ծախսի զրոյական լինելը:

Պողոսյանը նշեց , որ գույքագրումը կարևոր խնդիր է՝ ճիշտ ժամանակին լինելու, ֆինանսները արժանահավատ արտացոլելու համար և որ շատ ողջունելի է տեսչական մարմնի նախաձեռնությունը: Միաժամանակ շատ տեղին հարցադրում է թե

այն հոդվածը որից վերցվում է գումարը՝ չհանգեցնի ֆինանասական և ոչ ֆինանսական ցուցանիշների վատթարացմանը և երկրորդ՝ նոր կարիքի առաջացմանը՝ չստացվի որ այսօր վերցնում ենք, բայց վաղը վերանայման կարիք լինի:

Հարցը միաձայն հավանության արժանացավ:

Օրակարգի 3-րդ՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի բնականոն գործունեությունը չխաթարելու և պատշաճ կերպով իրականացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել վերելակ՝ ներկայացրեց Տ.Պետրոսյանը:

Նա նշեց, որ ներկայումս շահագործվող վերելակի աշխատանքը պարբերաբար խաթարվում է, որը վտանգ է հանդիսանում աշխատակիցների կյանքի և առողջության համար: Այն իր տեղադրման օրվանից ի վեր չի փոխարինվել, տարիների ընթացքում Տեսչական մարմնի «1213. Տեսչական վերահսկողության ծրագիր» ծրագրի «11007. Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայություններ» միջոցառման բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4252 «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով նախատեսված միջոցներով նորոգվել է և մասամբ փոխարինվել են որոշ կարևոր մասեր, սակայն դրանից վերելակի աշխատանքի արդյունավետությունը չի փոխվել, քանի որ իր օգտակար գործողության ժամկետը սպառվել է:

Գ.Պապոյանի այն հարցին թե ինչու է այս հարցը քննարկվում՝ Տ.Պետրոսյանը նշեց, որ 4.000 հազարից ավել հոդվածային փոփոխությունները արվում են Խորհրդի համաձայնությամբ: Պողոսյանը հաստատեց, որ այո, բոլոր վերաբաշխումները ներկայացվում են Կառավարություն՝ Խորհրդի որոշմամբ:

Գ.Պապոյանի հարցին թե որ տողից է հանվում և արդյոք խնդիրներ չի առաջացնի, Տ.Պետրոսյանը նշեց,որ ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով 1213 «Տեսչական վերահսկողության ծրագիր» ծրագրի 11016 «Ոչ սպանդանոցային մորթի հետևանքով ստացված կենդանական ծագման հումքի տեղափոխման և ոչնչացման ծառայություններ» միջոցառման բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4241 «Մասնագիտական ծառայություններ» հոդվածով տարեկան

նախատեսված 29,000.0 հազ. դրամ գումարից առաջին կիսամյակի, ինն ամսվա և տարեկան ցուցանիշները նվազեցնել համապատասխանաբար նվազեցնել 9,000.0 հազ. դրամով և նույն չափով ավելացնել 1213 «Տեսչական վերահսկողության ծրագիր» ծրագրի 31006 «Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառման բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 5122 «Վարչական սարքավորումներ» հոդվածին:

Օրակարգի 4-րդ և 5-րդ հարցերը՝ ՍԱՏՄ որակի ապահովման վարչության 2025 թվականի 1-ին և 2-րդ կիսամյակի հաշվետվությունները, ինչպես նաև ՍԱՏՄ որակի ապահովման վարչության 2026 թվականի 1-ին եռամսյանի կատարողականի գնահատումը ներկայացրեց Մ.Գրիգորյանը:

Նշեց, որ Խորհրդի կողմից հաստատված որակի ապահովման վարչության տարեկան գործունեությանն ծրագրով հաստատված բոլոր միջոցվառումները ուսումնասիրվել են, խախտումներն արձանագրվել և մանրամասն ներկայացվել հաշվետվության մեջ, դրանք առանձին գրություններով պարբերաբար ներկայացվել են ՍԱՏՄ ղեկավարին՝ ՍԱՏՄ գործունեության բարելավման և շարունակական կատարելագործման նպատակով, ինչի հետևանքով աշխատանքներ են տարվել դրանք վերացնելու ուղղությամբ:

Խորհրդի կազմը միաձայն հաստատեց՝ ՍԱՏՄ որակի ապահովման վարչության 2026թ-ի 1-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը և հավանության արժանացրեց ՝ ՍԱՏՄ որակի ապահովման վարչության 2025 թվականի 1-ին և 2-րդ կիսամյակների հաշվետվությունները:

Խորհրդի օրակարգի 6-րդ՝ ՍԱՏՄ որակի ապահովման վարչության 2025թ-ի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը, հարցը Տ.Սարգսյանը առաջարկեց քվերկել հեռավար՝ ավելի լավ ծանոթանալուց հետո:Խորհուրդը միաձայն ընդունեց առաջարկությունը: 2026թ-ի հուլիսի 6-ին Խորհրդի կողմից հեռավար քվեարկության արդյունքում միաձայն հաստատվեց ՝ ՍԱՏՄ որակի ապահովման վարչության 2025թ-ի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Recoverable Signature

X

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

Գ. ՊԱՊՈՅԱՆ

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ